Երևանի Մ.Նալբանդյանի անվան հ33 հիմնական դպրոց

Ապահով Համացանց 2015

Դասի կարգախոսը՝

Եկե՛ք ստեղծենք ավելի ապահով Համացանցը միասին:

Դասի նպատակն էր՝

- ✓ Սովորեցնել երեխաներին, որ նրանք երբեք միայնակ չեն համացանցում և այն վտանգները , որոնց նրանք կարող են հանդիպել իրական կյանքում սպասելի են նաև համացանցում :Տրամադրելով անսահման եւ աննախադեպ հնարավորություններ, համացանցը պարունակում է նաեւ բազմաթիվ վտանգներ՝ հատկապես երեխաների համար:
- ✓ Համակարգված գիտելիքների տրամադրումն է համացանցի ապահով եւ արդյունավետ օգտագործման մասին:

Դասի Ընթացքը՝

- ✓ Ուսուցիչը նախապես կազմակերպել էր հարցում 6-8-րդ դասարաններում հետևյալ թեմայով՝ <<Հիմնականում ինչո՞վ եք զբաղվում համացանցում >> / կից

ներկայացվում է վերլուծությունը/ :



- ✓ Դասը անցկացվեց ըստ հարցման արդյունքների՝ հիմնական շեշտը դնելով հարցման ընթացքում առավելագույն ձայն հավաքած տարբերակների վրա՝
  1. Խաղեր
  2. Սոցիալական ցանցեր
  3. Վիդեոների, ֆիլմերի դիտում
- ✓ Դասը անցկացվեց խմբային մեթոդով 6-րդ և 7-րդ դասարաններում :
- ✓ Երեխաներին ներկայացվեց ապահով համացանցի մասին անհրաժեշտ տեղեկությունները : Դիտեցին համապատասխան բաժնի տեսանյութերը http://safe.am/esafetykit/start.html կայքի պաշարներից և ծանոթացան համացանցից ապահով օգտվելու ոսկե կանոնների հետ:
- ✓ Երեխաները բաժանվեցին խմբերի և յուրաքանչյուր թիմից ընտրվեցին ավագներ:
- ✓ Ապա աշակերտներին բաժանվեցին բրոշուրները համացանցից ապահով օգտվելու 10 խորհուրդներով :
- ✓ Հանձնարարվեց յուրաքանչյուր թիմին պատրաստել պաստառներ ապահով համացանց թեմայով :
- ✓ Կազմակերպվեց քննարկում խմբերի կողմից և խմբի ավագների կողմից ներկայացվեցին խմբի տեսակետները :
- ✓ Խմբերը ներկայացրեցին իրենց պաստառները :

- ✓ Ապա http://safe.am/esafetykit/teachers/index.html բաժնից նախապես ընտրված նյութերի միջոցով սկսեցին մրցել միմյանց հետ և հավաքել համապատասխան միավորներ :

Դասի վերջում խմբերը խաղացին “WILD WEB WOODS” խաղը :

Ֆայլին կցում եմ դասի նկարները:

Սարքավորում ներ.

Համացանցին միացված համակարգիչ, պրոյեկտոր

Ակնկալիքներ Դասից՝

Մեր առջև դրված նպատակի իրականացում:

Ուսուցիչ՝ Մ.Հակոբյան